«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 135 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Պատմություն առարկայի ընթացիկ, ընդհանրացնող և հանրագումարային կրկնության դասերի նպատակները, խնդիրներն ու պահանջները:

Առարկա՝ Պատմություն

Ուսուցիչ՝ Երևանի Խ. Սամուելյանի անվան թիվ 47-րդ միջնակարգ դպրոց

Վերապատրաստող՝ Սողոմոնյան Արամ

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….3

1. Պատմություն առարկայի ընթացիկ, ընդհանրացնող և հանրագումարային կրկնության դասերի նպատակները, խնդիրներն ու պահանջները …….…5

2. Պատմություն առարկայի ընթացիկ, ընդհանրացնող եվ հանրագումարային կրկնության դասերի դասավանդման մեթոդները……..13

Եզրակացություններ եվ առարարկություններ…….18

Օգտագործված գրականության ցանկ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: ՀՀ հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներն ուղղված են նախկին ուսուցչակենտրոն համակարգի փոխարեն աշակերտակենտրոն ուսուցման համակարգի ներդրմանը:

Ներկայումս կարևորվում է պատմություն առարկայի ընթացիկ, ընդհանրացնող և հանրագումարային կրկնության դասերի հետ կապված նպատակները, խնդիրներն ու պահանջները:

Պատմության դասերի կրկնության հետ առնչվող հարցերը նույնպես պահանջում են ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում, ուսուցման նորարարական մեթոդների կիրառում: Այդ մեթոդներից են «Պատմական հիշողության օղակներ», «Պատմական փոփոխությունների շրջանի աղյուսակ», «Հնգյակ», «Ապագայի անիվ», «Վենի դիագրամ», «Քարտեզագրում» մեթոդները, որոնք նպաստում են վերլուծական մտքի զարգացմանը, սեփական կարծիք ձևավորելուն, սեփական մտքերը գրագետ շարադրելու հմտությունների և ունակությունների ձևավորմանը և, ամենակարևորը, հնարավորություն են տալիս ավելի հիմնավոր յուրացնելու ուսումնական նյութը: Նորարարական մեթոդները օգնում են նաև արդյունավետ դասավանդմանը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել պատմություն առարկայի ընթացիկ, ընդհանրացնող և հանրագումարային կրկնության դասերի նպատակները, խնդիրներն ու պահանջները:

Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են սույն հետազոտության տրամաբանությունն ու կառուցվածքը:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

Վերլուծել պատմություն առարկայի ընթացիկ, ընդհանրացնող և հանրագումարային կրկնության դասերի նպատակները, խնդիրներն ու պահանջները:

Պարզաբանել Պատմություն առարկայի ընթացիկ, ընդհանրացնող և հանրագումարային կրկնության դասերի դասավանդման մեթոդները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Սույն աշխատանքի օբյեկտը հանդիսանում է պատմություն առարկայի ընթացիկ, ընդհանրացնող և հանրագումարային կրկնության դասերի նպատակները, խնդիրներն ու պահանջները, իսկ առարկան՝ պատմության դասավանդումը նորագույն մեթոդներով:

Հետազոտությունում կիրառված մեթոդները: Թեմայի ուսումնասիրության համար կիրառվել են նկարագրական, գրքագիտական, պատմական և վերլուծության մեթոդները: Հետազոտության կիրառված մեթոդներն են՝ դիտարկում, թեստավորում, վերլուծություն և այլն:

Գրականության տեսություն: Թեման լուսաբանող ծավալուն և փոքրիշատե ամբողջական աշխատանքներ են Պ. Հարությունյանի[1], Ա. Եփրիկյանի[2] և այլ հեղինակների աշխատությունները: Հետազոտությունը կատարելիս օգտվել ենք նաև այլ գրքերից, հոդվածներից և աշխատություններից:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք մասերից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանք ավարտվում է եզրակացությամբ և օգտագործված գրականության ցանկով: Աշխատանքի ծավալը կազմում է 19 էջ :

[1] Հարությունյան Պ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Ե., 2013:
[2] Եփրիկյան Ա., Պատմության դասավանդման արդի մեթոդներ և տեխնոլոգիաներ, Ե., 2021:

1.ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԹԱՑԻԿ, ԸՆԴՀԱՆՐԱՑՆՈՂ ԵՎ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Ընթացիկ կրկնություն: Դասի բացատրման կամ պարզաբանման ընթացքում ուսուցիչը անց է կացնում ընթացիկ կրկնությունը անցած նյութի վերարտադրություն, որի միջոցով վերականգնվում է հին և նոր դասերի միջև օրգանական կապը, ինչպես նաև համակարգվում, ընդհանրացվում և խորացվում են գիտելիքները տվյալ դասից, բաժնից կամ ամբողջական դասընթացից:

Այսպիսով, ընթացիկ կրկնության ժամանակ բավական չէ միայն վերարտադրել անցած նյութը: Այս կրկնության խնդիրը նրանում է, որ չպետք է թույլատրել ուսումնասիրած նյութերի մոռացություն, գիտելիքները դարձնել կայուն, նոր գիտելիքները կապել ստացածի հետ, ընդհանրացնել, համակարգել և խորացնել ունեցած գիտելիքները:

Պետք է հաշվի առնել նաև այն, որ լավ ընկալած, յուրացրած և մեկ անգամ ճիշտ վերարտադրած դասը առանց կրկնության լավ չի հիշվում: Ուսումնասիրվող նյութի ընթացիկ կրկնությունն ու ընդհանրացումը պարտադիր կերպով պետք է կապված լինեն դասի բովանդակության հետ:

Ընդհանրացումը գլխավորի և ընդհանուրի դուրսբերումն է:

Նոր նյութի հետ կապն ապահովելու համար ուսուցիչը հիշեցնում է անցածը, համեմատում և համադրում է նոր և արդեն ուսումնասիրած դասերը: Ուսուցչի առաջարկով սովորողները անդրադառնում են դասագրքին, կարդում հատվածներ փաստաթղթից, կատարում թեստային աշխատանքներ:

Թեստերը պարունակում են ընտրովի պատասխաններով հանձնարարություններ, բաց թողածը լրացնելու, ժամանակագրության ճշգրտման, սկզբնաղբյուրների, համեմատությունների, ճիշտը և սխալը գտնելու, պատճառահետևանքային կապերը որոշող և այլ առաջադրանքներ:

<u>Տնային հանձնարարություն:</u> Խառը կամ համակցված դասն իր մեջ ներառում է նաև տնային հանձնարարություն: Այն պետք է լինի և' որոշակի, և' տարաբնույթ, մատչելի, համապատասխանի դասի նպատակին, հաշվի առնի սովորողների հմտություններն ու կարողությունները, տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Սովորողներին պետք է հիշեցնել անցած այն նյութը, որը պետք է կրկնել հաջորդ դասին նորի ընկալման համար:

Տնային հանձնարարությունը ուսուցիչը սովորաբար տալիս է դասի վերջում: Երբեք չի կարելի տնային առաջադրանքը հանձնարարել զանգից հետո: Ուսուցիչը դասը պետք է ավարտի այնպես, որ տնային հանձնարարության համար մնա առնվազն 3-4 րոպե, որպեսզի չշեղվի սովորողների ուշադրությունը, և նրանք կարողանան ընկալել այն: Նշելով պարագրաֆը, դասի վերնագիրը՝ նա բացատրում է, թե ինչի վրա պետք է կենտրոնացնել ուշադրությունը, ի՞նչ անել, որպեսզի լավ հիշել, նկարագարդումներից որո՞նց առավել ուշադրություն ուշադիր դիտել և օգտագործել դասարանում պատասխանի ժամանակ, դասի վերջում եղած հարցերն ու առաջադրանքներն ինչպե՞ս կատարել:

Այսպիսով, տնային հանձնարարությունը ենթադրում է միայն առաջադրանքներ ամբողջ դասարանի համար, այլև լրացուցիչ շերտավորված առաջադրանքներ: Դրանց մեջ կարող են լինել համեմատական աղյուսակների կազմում, ուրվագծեր և դիագրամներ, խաչբառեր, զեկուցման պատրաստում գեղարվեստական կամ գիտամեթոդական գրականության հիմքի վրա. համառոտագրության և դրույթների կազմում և այլն:

Հաճախ տրվում են գործնական հանձնարարություններ երկար ժամկետով, օրինակ պատրաստել որևէ առարկայի մակետ կամ մոդել, հավաքել արխիվային և վիճակագրական տվյալներ: Այսպիսի առաջադրանքները գնահատվում են:

Տնային առաջադրանքները ուսուցիչը հանձնարարում է որոշակի մեթոդական համակարգով, որտեղ հաշվի է առնվում դասի բովանդակությունը, սովորողների ուժերին համապատասխան դասի ծավալը, հարցերի դրվածքը, դասարանի և առանձին սովորողների ճանաչողական հնարավորությունները ամբողջությամբ վերցրած: Տնային հանձնարարությունը պետք է ստուգել հաջորդ դասին: Տնային հանձնարարությունների մշտական չկատարելը բերում է գիտելիքների ցածր որակի կամ դրանց բացակայությանը:

2. Ստուգողական, ստուգման և գիտելիքների գնահատման դասեր:Ստուգողական դաս: Այսպիսի դասերի ընթացքում թեմայի կամ բաժնի վերաբերյալ անցկացվում է փուլային ստուգում, և պարզաբանվում են սովորողների մոտ առաջացած

հիմնախնդիրները: Նմանօրինակ դասերին կիրառվող աշխատանքային միջոցներից կարող են լինել թեստավորումը, համաժամանակյա համեմատական աղյուսակների կազմումը կամ ուվագծային քարտեզների լրացումը: Ուսուցիչը կիրառում է ստուգման այնպիսի մեթոդներ, որպեսզի բացահայտի, թե սովորողներն ինչ չափով են հիշում ուսումնասիրված նյութը կավ դասի ժամանակ ստացված տեղեկատվությունը հիշողության մեջ պահելու նրանց ընդունակությունները որքան են: Դրա համար անցկացնում է գրավոր հարցում նոր ուսումնասիրված կամ ուսուցչի կողմից պարզաբանված նյութի վերաբերյալ: Այն սովորողների համար օգտակար է նրանով, որ նրանք կարող են համեմատել իրենց գրավոր աշխատանքը դասագրքի նյութի համապատասխան բովանդակության հետ և գտնել սխալները:

Ստուգումը ուսուցման գործընթացի անքակտելի մասն է և ապահովում է սովորողի ու ուսուցչի փոխադարձ կապը: Ստուգման և գիտելիքների գնահատման դասերը իրենց խնդիրներով մոտ են ստուգողականին: Այստեղ դրվում է գիտելիքների դուրսբերման և գնահատման և ոչ թե նրանց ընդհանրացման խնդիրը: Այստեղ ստուգումը պահանջում է հենակետային փաստերի յուրացում ե բազային գիտելիքների մշակում: Այս տիպի դասերը սկսվում են ուսուցչի ներածական խոսքով տվյալ թեմայի վերաբերյալ:

Ընդհանուր զրույցի ժամանակ սովորողները լրացնում կամ շտկում են ընկերների պատասխանները: Գրավոր ստուգման ժամանակ ուսուցիչը նախօրոք ընտրում է թեստերը կամ հանձնարարության տարբերակները և մտածում է պատասխանների օրինակներ: Գրավոր աշխատանքի պարզաբանումը տեղի է ունենում առաջիկա դասերից մեկի ժամանակ կամ ամփոփվում է սովորողների կողմից տանը նախապատրաստվելուց հետո:

Եթե ուսուցիչդ ցանկանում է բացահայտել, թե սովորողները ինչպես են յուրացրել թեման, առաջարկում է դասագրքում թվարկված հիմնական մի քանի հարցեր ընտրել գրավոր աշխատանքի համար: Նման աշխատանքը ցույց է տալիս, թե որքանով են սովորողները ընկալել ու յուրացրել թեման:

3.Ընդհանրացնող կրկնության դասեր: Նպատակը, ձևերն ու բովանդակությունը: Ուսումնասիրվող նյութի իմաստավորմանն ու ընդհանրացմանն են ծառայում ընդհանրացնող կրկնության դասերը: Այս դասերի նպատակն է համակարգել գի-տելիքները և ստեղծել իրադարձությունների ամբողջական պատկեր, բացահայտել

ուսումնասիրվող փաստերի, գործընթացների և երևույթների միջև եղած նոր կապերն ու հարաբերությունները, օգնել սովորողներին առանձին փաստերի իմացությունից անցնել նրանց ընդհանրացմանը, էության բացահայտումից՝ պատճառահետևանքային կապերին: Չնայած նման դասերը կրում են մասնավոր բնույթ, բայց մեծ դեր են խաղում սովորողների պատմական գիտելիքների ձևավորման խնդրում:

Պատմության դասավանդման մեթոդիկայում մշակված են ընդհանրացնող կրկնությունների տարբեր ձևեր և դրանց համապատասխան ընդհանրացնող դասեր: Միջին դպրոցում ընդհանրացման հիմնական եղանակը հարցգրույցն է: Ավագ դպրոցում բացի դրանից կիրառվում է ուսուցչի ընդհանրուսցնող կրկնողության դասախոսությունները, ընդհանրացնող բնույթի սեմինար պարապմունքները:

Ընդհանրացումը չի համարվում պատմության ուսուցման ավարտական փուլ: Գիտելիքների ընդհանրացումը, հասկացությունների ձևակերպումը, օրենքները, գաղափարները, չափանիշները ծառայում են սովորողների կողմից պատմական փաստերի, մասնավոր հասկացությունների բացահայտման միջոց:

Դասի նպատակի ճիշտ դրվածքը թույլ է տալիս որոշելու կրկնության բազային բովանդակությունը, ընտրել հիմնական նյութը և մշակել հարցերն ու առաջադրանքները: Դասից մի քանի օր առաջ ուսուցիչը հայտնում է թեման, պարապմունքի անցկացման պլանը, տալիս հարցերն ու առաջադրանքները: Կատարվելիք աշխատանքի բովանդակությունը քննարկվում է սովորողների հետ միասին, իսկ դասի վերաբերյալ հարցերն ու առաջադրանքները փակցվում է դասարանում:

Դրանք կարող են լինել նաև աղյուսակի տեսքով.

Դասի թեման	Հարցեր և առաջադրանքներ կրկնության համար

Ընդհանրացնող-կրկնության դասերը կարող են լինել գործնական աշխատանքի կամ զրույցի տեսքով: Զրույցը գերակշռում է միջին դասարաններում: Ուսուցիչը այն անցկացնում է նախօրոք մշակված պլանով: Քննարկվում է պլանի յուրաքանչյուր կետ ըստ հարցերի, որոնք օրգանապես կապված են միմյանց հետ: Քննարկումը կարելի է

անցկացնել սովորողների պատասխանների ընթացքում: Օրինակ քննարկման է դրվում հետևյալ առաջադրանքը.

ա) փաստերի ընդհանրացմամբ ցույց տալ, թե ինչ փո¬փոխություններ տեղի ունեցան Գերմանիայում երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո (XI դասարան), բ) ֆրանսիական կենտրոնացված պետության ստեղծման պատճառները համեմատել անգլիական կենտրոնացված պետության ստեղծման պատճառների հետ, որոշել ընդհանուրն ու առանձնահատուկը (VII դասարան):

Բանավոր և գրավոր առաջադրանքների զուգակցումը: Ընդհանրացնող կրկնության դասերը կարող են իրենց մեջ ընդգրկել ոչ միայն բանավոր պատասխաններ, այլև սովորողների գրավոր աշխատանքները, առաջադրանքների, թեստերի, հանձնարարությունների կատարումը, համակարգող, ժամանակագրական, համաժամանակյա աղյուսակներ:

«Ռուսական կայսրությունը XVIII դարից մինչև XIX դարի սկիզբը» թեմայի ամփոփման համար նպատակահարմար է օգտագործել հետևյալ աղյուսակը.

Դարի քառորդ	Կայսր	Տնտեսական զարգացում	Ներքին քաղաքականություն	Արտաքին քաղաքականություն	Ազնվականների արտոնությունների աճ	Գյուղացիական Շարժումներ	Մշակույթ
1701-1725 1725-1750 1750-1775							

Հաճախ ընդհանրացնող-կրկնության դասերի մեջ են մտնում դպրոցական դասախոսություններն ու էքսկուրսիաները, բայց այստեղ դժվար է ընդհանրացնել սովորողների գիտելիքները: Մեծ առումով այս դասատիպերի խնդիրը կայանում է

նրանում, որ պետք է կրկնել, ամրապնդել, որոշակիացնել նախկինում ուսումնասիրած նյութերը:

Եթե ընթացիկ դասերի ժամանակ նյութը ուսումնասիրվում է ժամանակագրական հաջորդականությանը, ապա ընդհանրացնող կրկնությունը կարելի է ընդհանրացնել աղյուսակի հորիզոնական սյուներով, օրինակ դիտարկել ազնվականների արտոնությունների աճը XVIII դարում կամ մշակույթի զարգացումը:

Նշենք ընդհանրացման մեկ այլ միջոց: Ընդհանրացնող կրկնության դասերի նախօրյակին սովորողները առաջարկում են դասագրքի բովանդակությունից և իրենց տետրերից ընտրել և ժամանակագրական հաջորդականությամբ դուրս գրել այն փաստերը, որոնք վերաբերում են պետական իշխանության ամրապնդմանը Անգլիայում և Ֆրանսիայում, Ռուսաստանում:

Ընդհանրացնող դասերի ընթացքում սովորողները խմբովի քննարկում են իրենց գրառումները, ճշտում ու համակարգում են դրանք, վավերագրական ու պատմագիտական նյութերից դրանք լրացնում նոր փաստերով:

Խաղեր: Ընդհանրացնող կրկնության դասերը կարող են անցկացվել նաև խաղերի միջոցով: «Հին Եգիպտոս և Առաջավոր Ասիան» թեմաները ընդհանրացնող կրկնության դա¬սերի ընթացքում խորհուրդ է տրվում անցկացնել հետևյալ կերպ:

Դասի կահավորումը օգտագործել «Հին Եգիպտոս», «Առաջավոր Ասիա» և «Հին Արևելք» քարտեզները, հին աշխարհի պատմության վերաբերյալ ատլասներ, ուսումնական նկարներ' «Բուրգերի կառուցումը», «Բաբելոնի կախովի (Շամիրամի) այգիները», «Մեծ սֆինքսը Գիզայում», «Օտարներին հաղթող փարավոնը», «Բաբելոնական արքա Համմուրապիի օրենքների սյունը» և այլն, քարտեր, որոնց վրա առանձնացված են պատմական եզրերը (բուրգ, սֆինքս, շադուֆ, մումիա, քուրմ, ազնվական, ստրուկ և այլն):

Սովորողները բաժանվում են երկու թիմերի: Ամեն թիմ ունի իր անվանումը և ավագը: Մի թիմը ներկայացնում է Հին Եգիպտոսը, մյուսը՝ Առաջավոր Ասիան: Ամեն մի ճիշտ պատասխանի համար սովորողները ստանում են միավոր: Խաղը սկսվում է պատմական եզրերի իմացության ստուգումից: Եզրերը սովորողները բացատրում են բանավոր: Ապա սովորողները ստանում են թեմատիկ առաջադրանքներ:

1) Հավատու՞մ էին եգիպտացիները առավածներին: Ինչո՞վ կարող եք հիմնավորել: Պատասխանների համար ընտրել նկարներ:

2) Գիտական ինչպիսի՞ գիտելիքներ էին հայտնի Առաջավոր Ասիայի բնակիչներին:

3) Ի՞նչ էր իրենից ներկայացնում փյունիկյան այբուբենը:

4) Պատմեք Բաբելոն քաղաքի մասին:

5) Ինչու՞ Համմուրապին կազմեց իր օրենքների ժողովածուն, և ի՞նչ էր այն իրենից ներկայացնում:

6) Ցույց տվեք քարտեզի կամ ատլասի վրա, թե ինչ երկրներ էին նվաճվել Աքեմենյան Պարսկաստանի կողմից:

Վերջում երկու թիմերին էլ առաջարկվում է պատմել եգիպտական բուրգերի և Բաբելոնի կախովի այգիների մասին:

Նախապատրաստվելով խաղին' սովորողները նյութեր են գրում թեմայի վերաբերյալ' կանխամտածված այնտեղ կատարելով մի քանի պատմագիտական սխալ: Լավագույն համարվում է այն աշխատանքը, որում սովորողները դժվարությամբ են գտնում այդ սխալները:

Խաղի մեջ մտնում են նաև թվերով աղյուսակները, հասկացությունները, խաչբառերը: Հիմնասխնդրային հարցերը նախօրոք գրվում են գրատախտակին բոլորի գիտելիքները ստուգելու համար: Ամեն սովորող իրավունք ունի պատասխանելու մեկ հարցի:

Խաղի վերջում հաշվվում են միավորները, որ թիմը շատ միավոր է հավաքել, հաղթում է:

Գործնական մասնակցության խաղերը պատմական կրթության այն միջոցներից են, որոնց օգնությամբ ստեղծվում է տպավորություն, որ դպրոցականները անմիջականորեն հանդիսանում են պատմական տվյալ երևույթի մասնակիցները: Դրանք կարող են լինել պայմանագրեր, ճակատամարտեր, տնտեսական, քաղաքական, մշակութային բնագավառներին վերաբերող իրադարձություններ (թատերականացված դասեր):

4.Հանրագումարային կրկնության դասեր: Հանրագումարային կրկնության դասերը անցկացվում են ուսումնական տարվա վերջում: Այն կարող է անցկացվել վերլուծական-

ընդհանրացնող զրույցի, հարց ու պատասխանի, թեստային աշխատանքի և այլ մեթոդներով:

Այս դասերի նպատակն է ամրապնդել գիտելիքները կարևորագույն փաստերի վերաբերյալ, ընդհանրացնել և հանրագումարի բերել ուսումնասիրած նյութերը և հետևել հիմնական գործընթացների զարգացմանը սկզբից մինչև վերջ: Այսպիսով՝ անցածը կրկնվում է առանցքային հիմնախնդիրներով, բայց ոչ պարտադիր ժամանակագրական հաջորդականությամբ, ինչպես ընթացիկ կրկնությունների ժամանակ:

Այսպիսի դասերը սովորողների մոտ ձևավորում են որոշակի վերաբերմունք պատմական իրադարձությունների, երևույթների և գործընթացների վերաբերյալ: Սովորողները կիրառում են գիտելիքները աշխատելով աղյուսակների, գրաֆիկների, տրամաբանական սխեմաների հետ: Նրանց եզրահանգումներն ու ընդհանրացումները պարունակում են նոր գիտելիքների տարրեր:

Քննարկվող հիմնախնդիրների վերաբերյալ արդյունքները վեր են հանվում ուսուցչի ընդլայնված ամփոփիչ խոսքում:

Ընդհանրացնող կրկնությունը իր մեջ պարունակում է դասընթացի բարդ և հիմնախնդրային հարցերը: Այստեղ ուսուցիչը պարտադիր պետք է հետևի կրկնության թեմատիկ և տրամաբանական միասնությանը կրկնելով ոչ բոլոր դասերը: Դասընթացի հիմնախնդիրները պարզ կլինեն սովորողներին միայն դրանց բազմաթիվ քննարկումներից հետո:

Ուսումնական տարվա վերջում յուրաքանչյուր դասարանի համար ուսուցիչը կազմում է հանրագումարային կրկնությունների պլան:

Կրկնությունները անց են կացվում պետական ծրագրով նախատեսված հանրագումարային կրկնությունների համար հատկացված վերջին 3-5 ժամերին[3]:

[3] Հարությունյան Պ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Ե., 2013, էջ 217-227:

2.ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԹԱՑԻԿ, ԸՆԴՀԱՆՐԱՑՆՈՂ ԵՎ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Այսօր հնարավոր չէ գտնել մեկ հրաշալի մեթոդ, որը կարողանա լուծել ուսուցման առջև ծառացած բոլոր խնդիրները: Փորձը ցույց է տալիս, որ դասավանդման ընթացքում լավագույն արդյունքը կարող է ապահովել ավանդական և ժամանակակից մեթոդների համադրումը:

Ներկայացնեք ավանդական և ժամակակից առավել հայտնի մեթոդները, որոնք խորհուրդ են տրվում կիրառել պատմություն առարկայի ընթացիկ, ընդհանրացնող եվ հանրագումարային կրկնության ուսուցման գործընթացում:

Զրույցի մեթոդ: Զրույցը ուսուցման այն մեթոդն է, որի դեպքում ուսուցիչը վարպետորեն մշակված հարցերի միջոցով աշակերտների մեջ ակտիվացնում է նրանց արդեն ունեցած գիտելիքները ու կարողությունները, խթանում նրանց նոր գիտելիքների ձևավորմանը՝ ինքնուրույն վերլուծությունների, դատողությունների, եզրահանգումների միջոցով: Զրույցի ժամանակ շատ կարևոր է հարցուպատասխանի հնարի կիրառումը: Դասարանին կամ խմբերին ուղղված յուրաքանչյուր հարցից հետո ուսուցիչը մտածելու համար տալիս է ոչ մեծ դադար,որից հետո լսում է աշակերտներից որևէ մեկի պատասխանը: Եթե աշակերտները չեն կարողանում պատասխանել հարցին ուսուցիչը կարող է վերաձևակերպել, ավելի հստակեցնել հարցերը, դրանք մասնատել կամ նոր օժանդակող հարցեր տալ: Զրույցը պետք է ապահովի ակտիվ հաղորդակցություն դասարանում: Ուսուցիչը պետք է հետևի, որ բոլորն ակտիվորեն մասնակցեն զրույցին, ուշադիր լսեն հարցերը, մտածեն պատասխանելիս, քննարկեն իրենց ընկերների պատասխանները, փորձեն արտահայտել սեփական կարծիքը: Ուսուցիչը հնարավորությունէ ստեղծելու, որ աշակերտները շտկեն իրենց պատասխանները, դիմեն ընկերների օգնությանը: Չեն խրախուսվում թեմայից շեղող, դրա հետ կապ չունեցող և ակտիվության պատրանք ստեղծող հարցադրումները:

Բանավեճ: Ուսումնական բանավեճն աշակերտների ակտիվ մասնակցությամբ հիմնահարցի ճիշտ լուծման ուղիների որոնումն է մտքերի, դրույթների, կարծիքների նպատակային և որոշակիորեն կարգավորված փոխանակման, քննարկման միջոցով:

Բանավեճը ոչ այնքան աշակերտների՝ միմյանց տված հարցերի ու դրանց պատասխանների շարք է, որքան առկա հիմնահարցի քննարկում, լուծումների որոնում և դրանց համար գործադրված ջանքերի կազմակերպում: Բանավեճի ձևերից է Սոկրատեսյան բանավեճը, որը կապված է հին հունական փիլիսոփա Սոկրատեսի անվան հետ: Սոկրատեսյան մեթոդը խրախուսում է հարցերի միջոցով խնդիրների էությունը հասկանալու և ճշմարտության հասնելու մոտեցումը: Սոկրատեսյան բանավեճը զարգացնում է մտածողության որակը, հարցերը ձևակերպելու, իրենց դիրքորոշումները վերանայելու աշակերտների կարողությունները: Այս բանավեճի ժամանակ փաստերի իմացությանը վերաբերող հարցեր չեն տրվում:

Դեբատը բանավեճի մրցակցային ձևն է, նպաստում է աշակերտների մտահորիզոնի ընդլայմանը, մտավոր, հետազոտական, ստեղծագործական և կազմակերպման կարողությունների զարգացմանը:

Աշխատանք սկզբնաղբյուրներով: Սկզբնաղբյուրով աշխատանքի մեթոդը, կարևոր միջոց է ուսուցումն ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու համար: Սկզբնաղբյուրում մշտապես առկա են տարաձայնություններ, հակասություններ տարբեր իրողությունների ու խնդիրների շուրջ: Այս հանգամանքը սկզբնաղբյուրը դարձնում է ուսուցման գործընթացը խթանող միջոց

Դերային խաղ: Մարդկանց միջև գոյություն ունեցող շփման յուրաքանչյուր ձև ու հաղորդակցություն որոշակի առումով դերային խաղ է: Դերային խաղը մասնակիցներին տարբեր անսպասելի իրավիճակներում ներգրավող մեթոդ է, որը մղում է նրանց ընտրել որևէ դեր (կամ տեսակետ), խաղալ (քննարկել) և ավարտին հասցնել (յուրացնել) այն: Դերային խաղին նախորդում է լուրջ նախապատրաստական աշխատանք:

Դեպքի ուսումնասիրություն: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտներն ստանում են երևակայական կամ իրական խնդրահարույց իրավիճակի (հանգամանքներ, պատահարներ, դիպվածներ) կամ դեպքի նկարագրությունը, որը պարունակում է տվյալ դեպքին վերաբերող հեղինակի դիրքորոշումը, կողմնակի անձի տեսակետը, հիմնական, բացահայտված փաստեր, որտեղ առկա են որոշակի հակասություններ, կարծիքներ, տեսնել հակասությունները՝ լուծող իրավիճակներ: Այնուհետև նա քննարկում, վերլուծում է այդ փաստերն ու տեղեկությունները, պարզաբանում անցյալի ու ներկայի միջև հակասությունները, զուգորդում այն հայտնի

նմանատիպ իրավիճակների կամ նախադեպերի հետ, գնահատում խնդրի էությունը, կայացնում որոշում և ներկայացնում իր լուծումը: Դեպքերը կարող են հորինել ինչպես ուսուցիչը, այնպես էլ դասարանը ու առանձին աշակերտը:

Շրջագայություն պատկերասրահում: Շրջագայություն պատկերասրահում մեթոդը խճանկարի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ, զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, ստեղծագործելու և այլ կարողություններ ու հմտություններ: Դասարանը բաժանվում է 4 հոգանոց համագործակցող փոքր խմբերի: Ուսուցիչն ուսումնական նյութը կամ առաջադրանքը բաժանում է 4-6 հատվածի և յուրաքանչյուր խմբի տալիս դրանցից մեկը՝ ուսումնասիրելու: Խմբի թիվը կարող է մեծ լինել նյութի հատվածների թվից: Այս դեպքում նյութի նույն հատվածը կարող է տրվել երկու խմբի: Աշխատելով ուսումնական նյութից իրենց բաժին հասած հատվածի վրա (խորհուրդ է տրվում առաջադրանքի կատարման տարբեր մոտեցումներ հանդես բերվեն)՝ խմբերն ստեղծում են նյութի բովանդակությունն արտացոլող նկար, կոլաժ, աղյուսակ, դիագրամ և այլն: Պատրաստի աշխատանքները փակցվում են պատերին՝ ստեղծելով պատկերասրահ: Այնուհետև խմբերի ներսում աշակերտները հաշվում են 1-ից մինչև 4-ը և կազմում 4 նոր խումբ՝ ըստ իրենց համարների (բոլոր խմբերի 1-ին համարները մի խուումբ են, 2-րդները, 3-րդները և 4-րդները՝ ուրիշ խմբեր): Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, և տվյալ խմբի այն անդամը, ով մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը, մանրամասն ներկայացնում է իրենց աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությամբ կատարում լրացումներ կամ ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին: Շրջագայությունից հետո մասնակիցները վերադառնում են իրենց հիմնական խմբերը, վերանայում ու կրկին քննարկման հարց դարձնում իրենց աշխատանքները՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ, պարզաբանում նոր ծագած հարցերը: Գնահատումը կատարվում է ռուբրիկներով՝ խճանկարի ինչպես խճանկարի մեթոդի կիրառման ժամանակ:

Խմբային հետազոտություն: Սա ևս համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառման ընթացքում աշակերտները խմբերով ուսումնասիրում են որոշակի խնդիր: Խմբային հետազոտության մեթոդով աշխատանքը ևս սկսվում է խմբերի ձևավորումից և

թեմաների ընտրությունից: Խմբերի ձևավորումից և թեմայի(օրինակ՝ հայ-հռոմեական պատերազմ) ընտրությունից հետո անպայման անցկացվում է թիմ ձևավորող վարժություն: Այնուհետև սկսվում է խմբային աշխատանքի պլանավորման գործընթացը: Աշակերտները որոշում են իրենց աշխատանքի բովանդակությունը, նախանշում ռեսուրսները, մշակում գործողությունների պլան, սահմանում խմբի անդամների պարտականությունները: Եթե խմբի բոլոր անդամները ուսումասիրում են ամբողջական թեման, ապա պարտականությունների բաժանումը հեշտ է կատարել: Ընդամենը պետք է որոշել, թե ով ինչ սկզբանաղբյուրներ ու գրականություն է ուսումնասիրելու: Իսկ երբ խումբը բաժանվում է ենթախմբերի, և դրանցից յուրաքանչյուրը ուսումասիրում է որևէ ենթահարց, ապա պետք է որոշել թե ով է համակարգելու ենթախմբերի աշխատանքը, և ով է ներկայացնելու թեման: Խմբային աշխատանքի պլանավորումը հաջորդում է հետազոտության իրականացմանը, որն ամենաերկար փուլն է: Այս փուլում աշակերտները փնտրում են գրականություն, հավաքում տեղեկություններ: Այս ընթացքում ուսուցիչը պարբերաբար պարզում է, թե ինչ են անում աշակերտները և ինչի կարիք ունեն: Տեղեկատվության հավաքումից հետո աշակերտները ձեռնամուխ են լինում մշակելու, վերլուծելու, համակարգելու այն «եզրահանգումներ անելու, ամփոփելու և ներկայացման պատրաստվելու»: Այս փուլում ուսուցիչը պետք է փորձի օգնել ու աջակցել աշակերտներին, կանխել թեմայից հնարավոր շեղումները: Աշակերտներին կարելի է խորհուրդ տալ իրենց կատարած աշխատանքը պարբերաբար ներկայացնել խմբի անդամներին, հետազոտության ընթացքում օգտագործել աղյուսակներ, սխեմաներ, գրաֆիկներ և այլն: Հետազոտական աշխատանքի արդյունքների ամփոփումից հետո խմբերը պետք է ներկայացնեն դրանք: Ներկայացումը կարող է լինել բանավոր, գրավոր, բանավոր-գրավոր և պատկերային ձևով: Իհարկե, ցանկալի է, որ բոլոր միջոցներն էլ օգտագործվեն: Վերջում կատարվում է երեք նպատակի՝ խբային աշխատանքի, խմբային հետազոտական աշխատանքի և թեմայի բովանդակության յուրացման գնահատում, որոնց համար օգտագորշվում են համապատասխան ռուբրիկներ:

Խմբերը գնահատվում են ռուբրիկի միջոցով.

Չափանիշ	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ
Խմբի					
Հանձնարարության ճիշտ և հստակ ներկայացնելը					
Ներկայացման ոճը					
Օրինակների, փաստերի օգտագործումը					
Շնորհանդեսի					

Յուրաքանչյուր չափանիշ գնահատվում է առավելագույնը 2 միավոր: Համագործակցային ուսուցման առավելություններից է նաև, որ այն լուծում է մի շարք դաստիարակչական, սոցիալական խնդիրներ, աշակերտների մեջ դաստիարարկում է ինքնավստահություն, պատասխանատվություն, քննադատության և ինքնաքննադատության ունակություններ, հանդուրժողականություն, ներողամտություն:

Նախագծային մեթոդ: Նախագծերի մեթոդը ծագել է անցած հարյուրամյակի սկզբում ԱՄՆ-ում ու անվանվել նաև հիմնախնդիրերի մեթոդ և կապված է փիլիսոփայության և կրթության մեջ ամերիկացի փիլիսոփա ու մանկավարժ Ջ.Դյուիի և նրա աշակերտ Ու.Քիլպատրիկի անվան հետ: Ուսումնական նախագիծ ասելով հասկանում են սովորողների ստեղծագործական, հետազոտական խնդրի լուծման ցանկացած գործունեություն՝ նախապես անհայտ արդյունքով[4]:

Նորարարական մեթոդները օգնում են արդյունավետ դասավանդմանը:

---

[4] Հերթական ատեստավորման ենթակա պատմության ուսուցիչների մասնագիտական զարգացման, վերապատրաստման դասընթացների ուղեցույց, ՀՀ ԿԳ նախարարի 2011 թվականի օգոստոսի 29-ի N 997 – Ա/Ք հրամանի հավելված 2:

https://www.cfep.am › files › legislation

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով թեմայի ուսումնասիրությունից հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Հայոց և համաշխարհային պատմություն առարկաների դասավանդման բնագավառում նորագույն մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս ավելի հանգամանորեն վերլուծելու պատմական իրադարձություններն ու երևույթները, նպաստում է պատճառահետևանքային կապերի վերլուծությանը, սովորողների հետաքրքրության աճին, ապահովում է նրանց ներգրավվածությունը դասապրոցեսին, ստեղծագործական մտածողության և մտքերն ազատ արտահայտելու հմտության զարգացմանը և այլն:

2. Զրույց, բանավեճ, աշխատանք սկզբնաղբյուրներով, դերային խաղ, դեպքի ուսումնասիրություն, շրջագայություն պատկերասրահում, խմբային հետազոտություն,նախագծային, «Պատմական հիշողության օղակներ», «Պատմական փոփոխությունների շրջանի աղյուսակ», «Հնգյակ», «Ապագայի անիվ», «Վենի դիագրամ», «Քարտեզագրում» մեթոդները նպաստում են վերլուծական մտքի զարգացմանը, սեփական կարծիք ձևավորելուն, սեփական մտքերը գրագետ շարադրելու հմտությունների և ունակությունների ձևավորմանը և, ամենակարևորը, հնարավորություն են տալիս ավելի հիմնավոր յուրացնելու ուսումնական նյութը:

3. Կիրառվող մեթոդները թույլ են տալիս բարձրացնել դասապրոցեսի արդյունավետությունը և այն հնարավորինս համապատասխանեցնել պետական կրթա-կան չափորոշիչների պահանջներին:

4. Կայուն գիտելիքներից բացի, նորարարական մեթոդների կիրառումը նպաստում է աշակերտների մոտ մի շարք կոմպետենցիաների ձևավորմանը դաստիարակելով կոլեկտիվում աշխատելու ունակություն, հանդուրժողականություն, հարգանք ուրիշի կարծիքի նկատմամբ, ինքնավստահություն և այլն:

Հետազոտության արդյունքներից ելնելով առաջարկում ենք. դասապրոցեսում կիրառել բոլոր նախկին և ժամանակակից մեթոդների համադրությունը: Դա կհանգեցնի բավականին լավ արդյունքների հատկապես պատմության ուսուցման բնագավառում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հարությունյան Պ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Ե., 2013։

2.Եփրիկյան Ա., Պատմության դասավանդման արդի մեթոդներ և տեխնոլոգիաներ, Ե., 2021։

3.Սարգսյան Ա., Համաշխարհային պատմություն, 6-7 դասարաններ, ուսուցչի ձեռնարկ, Ե., 2013։

4.Նազարյան Ա., Սարգսյան Ա., Ուսուցչի ձեռնարկ։ Համաշխարհային պատմություն, 8-9 դասարաններ, , Ե., 2013։

5.Սարգսյան Ա.,Մալոյան Ա, Հայոց պատմություն 6-7 դասարաններ ուսուցչի ձեռնարկ, Ե., 2013։

6.Հերթական ատեստավորման ենթակա պատմության ուսուցիչների մասնագիտական զարգացման, վերապատրաստման դասընթացների ուղեցույց, ՀՀ ԿԳ նախարարի 2011 թվականի օգոստոսի 29-ի N 997 – Ա/Ք հրամանի հավելված 2։

https://www.cfep.am › files › legislation